



ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱԶԳՈՎԻՆ ՍԳՈՒՄ ԵՆՔ ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ ՇԶԳԼԵՏԻՐ ՀՅՅՐԱՊԵՏԻ ԱՆԴԱՐՄԱՆԵԼԻ ԿՈՐՈՒՍԵԼ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնուամ արտակարգ տրտմովթյուն է տիրուա, որովհետև ո՛չ ևս է բոլորից սիրված և հարգված Վեհափառը:

Հայրագորովս որբի նման լացակումած հեկեկում է Հայոց Ընդհանրական Հայրապետովթյան Մայր Աթոռը, որովհետև ո՛չ ևս է նրա Վեհափառ և ազգբնոտիր Գահակալը:

Անշափ սուած է պատել Միաձնաէջ Մայր Տաճարն ու աշխարհասփյուտ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին, որովհետև ո՛չ ևս է հայ Եկեղեցական նվիրապետովթյան Մայրագույն Պատրիարք-Քահանանայապետը, Հայոց Կրոնապետն ու Հովվապետը:

Ի խորոց սրտի սգուած է և հայ ժողովուրդը, որովհետև ո՛չ ևս է հայրենասեր ու ժողովրդամվեր Ազգապետը, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս նորին Ս. Օծովյուն Տ. Գեորգ Զ. Մրգազնագույն Հայրապետը:

Ասպրիլը՝ գարնան առաջին ամիսն է, քնության վերակենդանացման ավետարերը: Ասպրիլով են սկսվում ջերմիկ ու կենսանորոշ օրերը, որոնք միմիթառովթյուն և ապրելու հույս են ներշնչում՝ մանավանդ սառնաշունչ մասնաւություններից տառապած ախտավարակ հիմանդրներին:

Բայց, այս տարի, ապրիլ ամիսը բոլորովին կորցրեց իր հուարդուի նշանակովթյունը Ամենայն Հայոց ծերուապարդ Հայրապետի համար, որ փոխանակ ապրելու հույսի, ծանրորեն հիվանդ, — թեև միշտ մասնագետ բժիշկների գորգուրայից հոգատարովթյան ներքո, — մահվան մղձավանցով անցկացրեց ապրիլյան օրերը:

Եկավ և կենսուրախ մահիսը, Հայաստանի գեղեցիկ մայիսը:

Ջմրովստ հագան հայրենի սարերն ու ձորերը, ղաշտերն ու համերերը, այդինեղան ու պարտեզները:

Ամեն կողմ ծիլ էր ու ծաղիկ, ամեն կողմ երգ էր ու ցնծություն:

Միծաղ կար գեմքերի վրա, ցնծություն կար սրտերի մեջ: Հայաստանի ամբողջ տարածովթյան վրա, արդյունավետ և տաեղծագործ աշխատանքի համերգն է բարձրանում որաշնալուր և խանդրավառ: Ներկայի լուսաշղությանությունից և ապագայի պվեճի պայծառ հեռանկարից բխող երշանմկությունը թեւվաբաց սավառնուած էր ամենութերի: Միայն տրտուած էին Հայոց Հայրապետի հրվանդության մասին մոտովիկ լուր ունեցող անձինք, թեև վեճը գտնվուած էր ականավոր բժիշկների անմիջական հակողության տակ:

Եվ ով տեղեկացել էր այդ տիսուր լուրի՝ Վեհականարության մասին, առանց բացառության, սրտանց ցանկացել ու մաղթել էր Աստուծուան, որ Հայրենի բնության ծոցում փթթել սկսած կենսարեր գարուած օքներ բժշկական միջոցառուամներին և զուտով վերադրաներ առաջինազարդ Հայրապետի խանգարված առողջությունը:

Ասկայն, ափսու ս, այլ կերպ էր տնօրինած նախախնամովթյունը: Երբ հպոր Սուփետական Միությունուամ, անխորստակելի բարեկամությամբ և անսասանելի եղբայրությամբ իրար զորված բազմազգ ժողովուրբների հետ հայ ժողովուրբն էլ խանդրավառորեն նշուած էր 1945 թվականի մայիսի 9-ին վերջ գտած Հայրենական պատերազմի փառապանծ հաղթանակի 9-րդ տարեդարձը, վախճանվել

Էր Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք
և Կաթողիկոս Նորին Ս. Օծովյան Տ. Տ.
Գևորգ Զ. Հայրենասեր և մեծապոր Հայրա-
պետը:

Մահկանացու էր, ուստի՝ վաղ կամ անա-
գիտ պիտի մահանար: Բայց գեռևս անժա-
մանակ էր այս՝ իսկապես անդարմանելի
կորուստը Հայաստանյայց Առաքելական Ե-
կեղեցու համար, Ս. Էջմիածնի Հայրապե-
տական Մայր Աթոռի և Սիյուռի Հայության
համար: Նրանք, մանավանդ աշխարհի ներ-
կայում ապրած բաղաքականապես ան-
դպաստ և փոթորկու օրերին, գեռ շատ կա-
րիքն ունեին Հոգելուս Հայրապետի իմաս-
տում Եկեղեցականներ:

Անգամ հիմանդրության չարագուշակ օրե-
րին, Հոգեկան անհուն Էջմիածնում, նա խո-
սում էր այս և Հաջորդ մի քանի տարիների
ընթացքին իրագործվելիք մեծ ձեռնարկների
և ծրագրերի մասին, որոնք ազգային խոշոր
նշանակություն ունեն:

Մեռունորհնությունը, որի մեծահանգես-
կատարման բարոր տնօրինություններն արել
էր անձամբ, տեղի պիտի ունենար այս տա-
րի, սեպտեմբերին, աշխարհի չորս ծագերից
Էջմիածնի ժամանելիք հայ հավատացյալնե-
րի ներկայությամբ:

— Մեռունորհնությունը առիթ է սահեղեկու
Սփյուռքի Մեր Հարազատ զավակներից շա-
տերին, որպեսզի գան և սիհիական աշքերով
տեսնեն վերածնված Մայր Հայրենիքի ան-
հայինթաց վերելիք ու բարգավաճումը, Ա-
մենայն Հայոց Հայրապետության և Հայ
Եկեղեցու զարթոնքը, հայ ժողովրդի երջանիկ
առօրյան, — խանդավառորեն ասում էր նա,
Հարելով իր դեռևս պայծառաբիր հայացքը
ստեղծագործ շինարարությանը հարազարթ
մայրաբաղաքի լայնածիր համայնապատկերի
վրա:

Հայ Եկեղեցու պայծառացումը, Հայ Եկե-
ղեցականության, ի մասնավորի Էջմիածնի
միաբանության արժանավոր դիրքի բարձ-
րացումն ու ամրացումը, Էջմիածնի և Կիլի-
կիայի Հայրապետական Աթոռների միջև
ստեղծված միասնության ամրապնդումը,
Սփյուռք դարձած հայության մեկտեղումը
Հայրենի երկրի վրա, Ամենամ Հայոց Հայ-
րապետության իրավունքների և առանձնա-
շնորհումների պահպանման ապահովումը,
նախորդող երանաշնորհ կաթողիկոսների ե-
րազած և միշտ էլ երազ մնացած Մայր Տա-
ճարի նորոգումը՝ Նրա մոտահոգության առաջ-
նահերթ խնդիրներն էին: Այդ պատճառով էլ
նա Հայրաբար գուրգուրում էր Հոգելոր ճե-
մարանի, սարկավագների, հայ Եկեղեցա-

կանոնիրի վրա: Նրանց ամենափաքր հաջողու-
թյունից մեծապես ուրախանում էր նա:

— Այս տարի, օգոստիով Մեռունորհնության
հանդիսակատարությունից, անձամբ պիտի
կատարեմ արտասահմանում և երկրում ի-
րենց ագօգուտ ծառայություններով ու ան-
րասիր կյանքով փայլած մի շարք բարե-
ջնորհն: Վարդապետների եպիսկոպոսական
օծումը՝ ի պայծառություն մեր սիրելի Եկե-
ղեցում, — Էջմիածնի ասում էր նա և ավե-
լացնում, թե՝ միննույն նպատակով, ի
նպաստ Հոգելոր ճեմարանի, ապահովելու
էին նյութական լայն միջոցներ, պատրաս-
տելու համար բարձր դաստիարակությամբ
օժուած Եկեղեցականներ:

Երջանկահիշշատակ Վեհափառ Հրձվում
էր նվիրապետական երկու Աթոռների միջև
ստեղծված սերտ գործակցությամբ և միաս-
նությամբ: Այդ գործակցությունն ու միաս-
նությունը առավել ևս ամրապնդելու և Հա-
վերժացնելու նպատակով նախատեսում էր
կազմակերպել Եկեղեցականների փոխացե-
լություններ՝ երկու կենտրոններում միան-
գամայն, ինչպես նաև Էջմիածնում գումարել
համազային-Եկեղեցական ֆողով երկու Ա-
թոռներին պատկանող թեմերից ընտրված
պատգամավորներով: Նրա ամենաբռուս իդ-
ձերից մեկն էր Կիլիկիայի Կաթողիկոսական
Աթոռի վրա բազմած տեսնել երջանկահի-
շատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի արժանա-
վոր հաջորդին:

— Իսկ ինչ վերաբերում է Սփյուռք դար-
ձած հայության Մայր Հայրենիքում հավաք-
ման հարցին, դա՝ իմ կտակին է, ինչպես ասել
եմ ուրիշ առիթով էլ: Ամեն ժողովուրդ ունի
իր հայրենիքը: Հայ ժողովուրդի սրբություն
սրբոց Հայրենիքն էլ Հայաստանն է, որտեղ
ի վերջո պետք է Հավաքվեն քաղաքական
գիրախատ գեպերի բերմամբ աշխարհով մեկ
ցրիվ ընկած հայերը, — նշում էր նա ակներն
հուզումով:

Գերագույն երջանկության հուրը փայլում
էր նրա մեղմանուշ աշքերի մեջ, երբ ավե-
տում էր, թե՝ արդեն ծեռք էր բերել Ամենայն
Հայոց Հայրապետության բազմադարյան ի-
րավունքների և առանձնաշնորհումների ան-
սալիթաք շարունակումը երաշխավորող տնօ-
րինությունները: Հետո, բագունակուր երկնամ-
րաբ, որպես նոր օրերի Սիմեոն ծերումի,
փառք էր ատլիս Աստուծո, որ իրեն շնորհել
էր Հայրապատ Պետության բարձր կարգա-
գրությամբ, Մայր Տանարում սկսած Հիմնա-
կան նորոգությունների առաջին աշխա-
տանքները տեսնելու բախտավորությունը:
«Աստված թող այնպես անի, որ ես մինչև
կյանքի վերջին բովեն պահեմ գիտակցու-
թյունս», — եղրափակում էր նա իր խոսքերը.

նրանց կցորդելով՝ հանուր աշխարհի խաղաղության և մարդկության եղբայրության ինպաստ հոգերուի աղոթքը:

Նախախնամությունը, իրոք, իրականացրեց նրա վերջին խնդրանքը: Նա, իր կյանքի մինչև վերջին րոպեն, պահեց լիիվ գիտակցությունը: Վախճանվելուց սակավաթիվ ժամեր առաջ նա ընդունեց մի խումբ շնորհալի սարկավագներին և նրանց խրատեց՝ երբեք շրավագնանել Հայրենիքին, միշտ հավատարիմ մնալ Հայաստանյաց Եկեղեցուն և Մայր Աթոռին:

Օժտված բազմապիսի անստգուտ առաքենություններով, նա սիրվեց ժողովրդից և հարգվեց բոլորից անխտիր: Ահա ինչո՞ւ իրավունք ուներ այն հավատացյալ պառակ հայուհին, որ Երևանի Ս. Զորավար եկեղեցու փողոցում, լսելով Հայոց մեծագործ և մեծառողի Հայրապետի վախճանման բոթը, վըշտահար ու տրտմաթախիծ, հառաշեց:

— Դժբախտությո՞ւն...

Այլ՝, հայ ժողովրդի համար մեծ դժբախտություն է նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի վախճանվելը: Բայց մահա-

ցածների համար հուսակորուկս ողբալը՝ ապագայի հեռանկար շունեցող տգետ մարդկանց վայել է: Հայ ժողովրդը հաճախ է ենթարկվել նման և ավելի ծանրակշիռ դժբախտությունների, սակայն երբեք չի հուսահատվել և չի ընկճվել: Ծնդհակառակը՝ մնացել է բարձրաճակատ և աննկուն: Նա միշտ էլ ունեցել է փյունիկ թռչունի պես մոխիրներից: Վերահառնելու ինքնածին ուժութայս՝ վերածնված Հայաստանի և նրա մայրական ծոցում վերազարթնած և վերակազմակերպված Առավորշահիմն Մայր Առողջության:

Ազգովին սպալով հանդերձ իմաստուն, մեծագործ, հայուննասեր և ազգանվեր Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Զորեքը անդարմաննելի կորուսը, անխախտ վըստահություն ունենք, որ հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն պիտի հաջողվի շուտով ընտրել նրա՝ և՛ իրականացման ճանապարհի վրա դրված, և՛ դեռևս չիրականացած՝ ազգօգուտ և հայունոգուտ իղձերն իրականացնող արժանավոր հաջորդին:

